ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության, ինչպես նաև օտարերկրյա պետություններից կենդանիների վտանգավոր վարակիչ հիվանդությունների հանրապետության տարածք ներթափանցման կանխարգելման միջոցառումներ:

Պետությունը **պետպատվերի** շրջանակներում հոգում է միայն կենդանիների առավել հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջացառումների ծախսերը: Մնացած վարակիչ և ոչ վարակիչ, ճիճվային, արյունապարազիտային և այլ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների (բուժում, մշակում) իրականացման համար վճարումները կատարվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից:

Պետպատվերի շրջանակներում իրականացվում է հետևյալ հիվանդությունների դեմ պայքարը.

Խոշոր եղջերավոր անասուններ

1. բրուցելյոզ,
2. տուբերկուլյոզ,
3. սիբիրախտ,
4. պաստերելյոզ,
5. էմկար,
6. դաբաղ "AO",
7. դաբաղ "Ասիա":

Մանր եղջերավոր կենդանիներ

1. բրուցելյոզ,
2. սիբիրախտ:

Խոզեր

1. բրուցելյոզ,
2. սիբիրախտ,
3. դասական ժանտախտ:

Ձիեր

1. բրուցելյոզ,
2. սիբիրախտ:

Պետպատվերի շրջանակներում պատվաստանյութերը, ախտորոշիչ միջոցները և ախտահանիչ նյութերը բաշխվում են Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի համապատասխան անասնաբուժական կառուցվածքային ստորաբաժանման կողմից:

Բոլոր համայնքների անասնաբույժները պետպատվերի շրջանակում անհատույց տրվող պատվաստանյութերը, ախտորոշիչ միջոցներն ու ախտահանիչ նյութերը կարող են ստանալ համապատասխան տարածքային մարմիններից, որոնց ցանկը բերված է տեքստում:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում Հայաստանում անասնաբուժական ծառայությունների կազմակերպման և մատուցման հարցերի, պետպատվերի շրջանակներում տրամադրվող անասնաբուժական ծառայությունների և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Մայիս, 2005

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անասնաբուժությունը գյուղատնտեսության ոլորտում պետության կողմից մատուցվող կարևոր ծառայություններից մեկն է, որն իրականացնում է կենդանիների հիվանդությունների կանխման, բուժման, հիվանդություններից առաջացած վնասների, անպտղության եւ անկումների կրճատման, կենդանական ծագում ունեցող մթերքի եւ հումքի որակի բարձրացման, մարդկանց ու կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումներ:

Անասնաբուժության ոլորտի պետական կառավարումը իրականացվում ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից, որը.

ա) կազմակերպում է անասնաբուժական ծառայություն, իր իրավասության սահմաններում ղեկավարում է անասնաբուժական ծառայության գործունեությունը, ամրապնդում է դրա նյութատեխնիկական բազան,

բ) կազմակերպում եւ իրականացնում է կենդանիների եւ թռչունների վարակիչ, մակաբուծային եւ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը, բուժմանը եւ վերացմանն ուղղված միջոցառումները,

գ) կանխորոշում եւ գնահատում է հանրապետությունում համաճարակային իրավիճակը, ապահովում է անասնապահությամբ զբաղվող իրավաբանական, ֆիզիկական անձանց կողմից կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման եւ վերացման, ինչպես նաեւ ախտահանման, դեզինսեկցիայի, դեռատիզացիայի եւ այլ միջոցառումների պարտադիր կատարման ենթակա պահանջների իրագործումը,

դ) առողջապահական մարմինների հետ համատեղ իրականացնում է մարդկանց եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների դեմ պաշտպանության միջոցառումներ,

ե) գերատեսչական անասնաբուժական ծառայություններին, տնտեսավարող սուբյեկտներին եւ քաղաքացիներին տալիս է անասնաբուժական հարցերին վերաբերող ցուցումներ՝ պարտադիր կատարման համար, ընդունում է գերատեսչական նորմատիվ ակտեր,

զ) ընդունում է անասնաբուժության վերաբերյալ հրահանգներ եւ նորմատիվ ակտեր և իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ,

Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործում է Անասնաբուժական պետական տեսչությունը, որը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, անասնաբուժության բնագավառում պետության անունից իրականացնում է վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ:

Անասնաբուժական տեսչության հիմնական խնդիրներն են.

ա) մարդկանց եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանումը,

բ) օտարերկրյա պետություններից կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխելու նպատակով հանրապետության տարածքի պահպանությունը,

գ) անասնաբուժասանիտարական պահանջների տեսակետից անվտանգ անասնապահական հումքի արտադրության հսկողության ապահովումը,

դ) կենդանիների տեղափոխման, ներմուծման, արտահանման, կենդանական ծագում ունեցող մթերքի եւ հումքի, կենդանիների պաշտպանության միջոցների, անասնաբուժական պատրաստուկների, կերերի եւ լրացակերերի նկատմամբ հսկողությունը,

ե) կենդանական ծագում ունեցող մթերքի եւ հումքի, կենդանիների կերերի, կերախառնուրդների, դրանց հետագա վերամշակման, կենդանիների պաշտպանության միջոցների ներմուծման եւ արտահանման դեպքում, ինչպես նաեւ անասնապահական մթերքի իրացման կետերում անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացումը,

զ) շրջակա միջավայրի պաշտպանության համար իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից անասնաբուժասանիտարական պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը:

Անասնաբուժական տեսչության հիմնական գործառույթները վերոնշյալ խնդիրների իրականացմանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

Անասնաբուժական տեսչությունն իր խնդիրներն ու գործառույթներն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների միջոցով:

Կառուցվածքային ստորաբաժանումներն են Բավրայի, Բագրատաշենի, Գոգավանի, Ազարակի, Մարգարայի, Երևանի, Գյումրու և Այրումի սահմանային անասնաբուժական հսկիչ կետերը:

Տարածքային մարմիններն են.

Անասնաբուժական պետական տեսչության՝
Արագածոտնի մարզային բաժին, ք. Աշտարակ, հեռ 0232 33161,
Արարատի մարզային բաժին,
ք. Արտաշատ, հեռ.0232 24527,
Արմավիրի մարզային բաժին,
ք. Արմավիր, հեռ.0237 6542,
Գեղարքունիքի մարզային բաժին,
ք. Գավառ, հեռ. 0264 27078,
Լոռու մարզային բաժին,
ք. Վանաձոր, հեռ. 0322 59521,
Կոտայքի մարզային բաժին,
ք. Հրազդան, հեռ. 0223 62227,
Շիրակի մարզային բաժին,
ք. Գյումրի, հեռ. 0312 22691,
Սյունիքի մարզային բաժին,
ք. Գորիս, հեռ. 0284 22174,
Վայոց Ձորի մարզային բաժին,
ք. Վայք, հեռ. 0282 22580,
Տավուշի մարզային բաժին,
ք. Իջևան , հեռ. 0263 36153,
Երևանի մարզային բաժին, հեռ. 421164:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության համակարգում գործում է նաև Անասնաբուժության բաժինը, հեռ. 450960:

Ներկայումս Հայաստանում իրականացվում են նպատակային ծրագրեր՝ ուղղված երկրում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն (ապահով) հակահամաճարակային վիճակի ստեղծմանը: Այդ նպատակով պետության կողմից իրականացվում են կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու